

Արձանագրություն N 5
ԵԼՀ Ֆակուլտետի գիտխորհրդի

31.01.2020թ. նիստի

Օրակարգ

1. 2019-2020 ուս.տարվա առկա ուսուցման 1-ին քննաշրջանի արդյունքների ամփոփում:
2. Անվանական կրթաթոշակների ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 36 անդամներից 22-ը:

Ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը շնորհավորեց գիտխորհրդի անդամներին II կիսամյակի մեկնարկի կապակցությամբ և մաղթեց արդյունավետ աշխատանք:

1. ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը ամփոփեց 2019-2020 ուս.տարվա առկա ուսուցման 1-ին քննաշրջանի արդյունքները: Նա նշեց, որ **մագիստրատուրայում** առկա ուս. քննաշրջանից հետո 1-ին կուրսում առարկայական պարտք ունեն **9** ուսանող, իսկ 2-րդ կուրսում՝ **7** ուսանող:

Բակալավրում սովորող լուծարքի ներկայացված ուսանողների քանակը հետևյալն է.

ԼՄՇ 1կ.-81 ուսանողից լուծարք ունեն 25 ուսանող

ԼՄՇ 2կ.-45 ուսանողից լուծարք ունեն 2 ուսանող

ԼՄՇ 3կ.-81 ուսանողից լուծարք ունեն 4 ուսանող

ԼՄՀ 4կ.-84 ուսանողից լուծարք ունեն 13 ուսանող

Թարգմանչական գործ

1կ.- 84 ուսանողից լուծարք ունեն 10 ուսանող

2կ.- 29 ուսանողից լուծարք ունեն 3 ուսանող

3կ.- 81 ուսանողից լուծարք ունեն 13 ուսանող

4կ.- 86 ուսանողից լուծարք ունեն 10 ուսանող

Լեզու և գրականականություն

1կ. անգլ/ֆրանս – 45 ուսանողից լուծարք ունեն 2 ուսանող

անգլ/գերմ.- 21 ուսանողից լուծարք ունեն 5 ուսանող

անգլ/իսպ.- 44 ուսանողից լուծարք ունեն 5 ուսանող

անգլ/իտալ.- 11 ուսանողից լուծարք ունեն 2 ուսանող

2կ. անգլ. – 26 ուսանողից լուծարք ունեն 11 ուսանող

գերմ.- 6 ուսանողից լուծարք ունեն 3 ուսանող

իսպ.- 4 ուսանողից լուծարք ունեն 0 ուսանող

իտալ.- 3 ուսանողից լուծարք ունի 1 ուսանող

ֆրանս – 6 ուսանողից լուծարք ունեն 0 ուսանող

3կ. անգլ. – 91 ուսանողից լուծարք ունեն 35 ուսանող

գերմ.- 11 ուսանողից լուծարք ունեն 3 ուսանող

իսպ.- 10 ուսանողից լուծարք ունեն 5 ուսանող

իտալ.- 4 ուսանողից լուծարք ունեն 3 ուսանող

ֆրանս – 19 ուսանողից լուծարք ունեն 4 ուսանող

4կ. անգլ. – 136 ուսանողից լուծարք ունեն 34 ուսանող

գերմ.- 25 ուսանողից լուծարք ունեն 14 ուսանող

իսպ.- 22 ուսանողից լուծարք ունեն 6 ուսանող

իտալ.- 4 ուսանողից լուծարք ունեն 1 ուսանող

ֆրանս – 19 ուսանողից լուծարք ունեն 13 ուսանող

2. ԼՍԵՑԻՆ՝

Թարգմանության տեսության և պրակտիկայի, Ֆրանսիական բանասիրության և Ռոմանական բանասիրության ամբիոնների վարիչները ներկայացրեցին անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց երկու կիսամյակով անվանական կրթաթոշակի ներկայացնել հետևյալ ուսանողներին՝ բաշխելով կրթաթոշակները երկու ուսանողների միջև ըստ առաջին ու երկրորդ կիսամյակի: Ստորև ներկայացվում են II կիսամյակի անվանական կրկաթոշակի առաջադրված ուսանողները:

1. Նանե Գրիգորյան /Ֆրանս. լեզու և գրակ, մագիստրատուրա 2-րդ կուրս, ՄՈԳ 19,25/ - Ֆ. Վերֆելի անվան կրթաթոշակ:
2. Վարդիկյան Մարիամ /թարգմ, 3-րդ կուրս, ՄՈԳ - 19,92/, Վ. Սարոյանի անվան կրթաթոշակ:
3. Խաչատրյան Մերի / իսպ լեզու և գրակ.,մագիստրատուրա 1 կուրս, ՄՈԳ-19,72- Ֆ. Վերֆելի անվան կրթաթոշակ

3. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

1. Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ Ռ. Ղազարյանը ներկայացրեց ամբիոնի նիստում քննարկված թարգմանաբանական հանդեսի ստեղծման հարցը, որը պետք է լինի

տարեգիր՝ միջազգային ձևաչափով: Ամբիոնի դասախոսների աշխատանքները տպագրվում են տարբեր ամսագրերում, և այս առիթով, ամբիոնը նպատակահարմար է գտնում ստեղծել թարգմանաբանական հանդես, որտեղ կտպագրվել ինչպես անբիոնի, այնպես էլ հայաստանյան ու միջազգային այլ բուհերի դասախոսների աշխատանքներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հավանություն տալ թարգմանաբանական հանդեսի

ստեղծմանը: Քվեարկությունը՝ միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ ԵԼՀ ֆակուլտետի կրթական ծրագրերի մոնիթորինգի ամփոփիչ հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Գ.Բարսեղյանը նշեց, որ հիմնվելով ներկայացված առանձին հաշվետվությունների և եզրակացությունների վրա, կազմվել է ԵԼՀ ֆակուլտետի բոլոր կրթական ծրագրերի մոնիթորինգի ամփոփիչ հաշվետվություն:

Ներկայացված հաշվետվություններից և եզրակացություններից առանձնացվել են հետևյալ ամենակարևոր առաջնահերթությունները.

- պարտադիր առարկայացանկի վերանայում և մասնագիտական, գործնական հմտություններ ուսուցանող առարկաների ավելացում
- օտար լեզվով դասավանդվող առարկաների ավելացում
- գնահատման առավել օբյեկտիվ և արդյունավետ ձևերի ներդրում,
- մասնագիտական պրակտիկայի առավել օպտիմալ իրականացում, ընդ որում՝ ԵՊՀ-ից դուրս,
- միջբուհական, միջգերատեսչական, միջազգային համագործակցության ընդլայնում,
- ֆակուլտետի լսարանները ժամանակակից տեխնոլոգիական միջոցներով հագեցնելու անհրաժեշտություն (համացանցային կապի աշխատանքի բարելավում լսարաններում, էլեկտրոնային գրատախտակների և պրոյեկտորի ապահովում, համակարգչային դասեր անցկացնելու հնարավորությունների ստեղծում):

**Ընդհանուր եզրակացություն *Անգլերեն լեզու և գրականություն*
կրթական ծրագրի վերաբերյալ**

Ծրագիրը հաջողված է՝ մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները խորացնելու, նաև ընդգրկված դասախոսների շնորհիվ: Ծրագրի առավելություններից է արդիական միջգիտակարգային բնույթ ունեցող առարկաների դասավանդումը և միջազգային համագործակցության հնարավորությունը: Այնուամենայնիվ, գործնական առարկաներ ավելացնելու և որոշ պարտադիր ընդհանրական առարկաներ ԲԿԾ տեղափոխելու կարիքը նույնպես առկա է: Գիտելիքի ստուգման ձևերի վերանայման առումով առաջարկվում է ավելացնել թեստային հանձնարարությունները, ինչպես նաև նախապատրաստել միջազգային թեստավորման:

**Ընդհանուր եզրակացության *Կիրառական լեզվաբանություն* կրթական
ծրագրի վերաբերյալ**

Ծրագիրն արդիական է և հաջողված՝ դասավանդվող միջգիտակարգային առարկաներով, դասավանդման որակով և ընդգրկվածությամբ: Ծրագրի առավելություններից է առարկայացանկի համապատասխանությունը եվրոպական երկրների բուհական չափանիշներին, ինչպես նաև դասավանդման միջազգային փորձ ունեցող մասնագետների ներգրավվածությունը: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է ավելացնել անգլերենով դասավանդվող առարկաները, ինչպես նաև միջազգային համագործակցության հնարավորությունը և գործնական գիտելիքներ հաղորդող առարկաների թիվը: Յուրացրած գիտելիքների կիրառման հնարավորությունների ստեղծումը նույնպես էական է այս ծրագրի արդյունավետ գործակցման հարցում: Կարևոր է նշել նաև, որ ուսանողների

համակազմի ամբողջական լրացմանը կարող է նպաստել ո՛չ միայն ընդհանուր գոհունակությունը ծրագրից, այլև մասնագիտական ընդհանուր ուղղվածության փոփոխության դեպքում /օտար լեզու և գրականությունից՝ կիրառական լեզվաբանություն/ անվճար համակարգում սովորելու հնարավորության ապահովումը:

**Ընդհանուր եզրակացություն Միջմշակութային Հաղորդակցություն
/ՖՐԱՆՍԵՆՏԵՆ/ կրթական ծրագրի վերաբերյալ**

Ծրագիրը, ընդհանուր առմամբ, համարվում է հաջողված, որին նպաստում է ո՛չ միայն դասավանդող մասնագետների, այլև ֆրանսախոս դասախոսների ներգրավվածությունը ծրագրում: Սակայն անհրաժեշտ է վերանայել ծրագրի առարկայական բովանդակությունը և, որոշ դեպքերում, արդիականացնել դասավանդման մեթոդիկան: Կարևոր է ապահովել մագիստրոսական թեզերի պատրաստման և գնահատման օբյեկտիվությունը: Հարկ է ստեղծել հնարավորություն՝ յուրացրած գիտելիքները գործնականում կիրառելու համար:

***Ընդհանուր եզրակացություն Թարգմանչական գործ /ԱՆԳԼԵՆԵՆ
ԼԵԶՈՒ/***

կրթական ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ.

Ուսանողները գորհունակություն են հայտնել ծրագրի բաղադրիչներից և դասավանդման որակից, սակայն նշվում է ձեռք բերված գիտելիքը ստուգելու և օբյեկտիվ գնահատելու նոր ձևեր մշակելու անհրաժեշտության մասին: Ծրագրի ակնհայտ առավելություններից է Flipped Classroom մեթոդի, Moodle ծրագրի և սինխրոն կաբինետի կիրառումը, ինչպես նաև սինխրոն թարգմանիչների դասախոսությունների կազմակերպումը և TED EX ծրագրի հետ արվող համատեղ աշխատանքը: Այնուամենայնիվ, կա գիտելիքները գործնականում

կիրառելու հնարավորության պակաս, որի նպատակով ծրագրվել են որոշակի քայլեր առկա համագործակցությունը ընդլայնելու, ինչպես նաև առարկայական ծրագիրը վերանայելու նպատակով:

**Ընդհանուր եզրակցություն *Արտասահմանյան գրականություն*
կրթական ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ**

Ծրագիրը հաջողված է, նաև դրանում ընդգրկված մասնագետների շնորհիվ: Սակայն ուսանողների պնդմամբ անհրաժեշտ է վերանայել առարկայացանկը՝ գործնական գիտելիքներ փոխանցելու տեսանկյունից: Կարևոր է ամրապնդել միջբուհական համագործակցությունը՝ հնարավորություններ ստեղծելով պրակտիկա իրականացնելու համար: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել որոշ կազմակերպչական հարցերի, ինչպես նաև որոշ դեպքերում հարկ է բարելավել ուսանող-դասախոս փոխհամագործակցությունը: Պետք է նաև վերանայել գիտելիքի ստուգման կարգը՝ առավել օբյեկտիվություն ապահովելու միտումով:

**Ընդհանուր եզրակացություն *Միջմշակութային հաղորդակցություն*
/ԻՏԱԼԵՆԵՆ/ կրթական ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ**

Ծրագրի առավելություններից է միջազգային համագործակցությունը և փոխանակման ծրագրերի առկայությունը: Այնուամենայնիվ, առարկայական ցանկում փոփոխության կարիք կա՝ հայերենով դասավանդվող որոշ առարկաների նվազեցման, ինչպես նաև դրանց մի մասի կամընտրական սկզբունքով ուսուցանելու առումով: Ցանկալի է ավելացնել առարկաներ, որոնց գիտելիքի յուրացումը կնպաստի աշխատաշուկայում ուսանողներին ներգրավելու գործին:

**Ընդհանուր եզրակացություն *Միջմշակութային հաղորդակցություն*
/ԻՏՊԱՆԵՆԵՆ/ կրթական ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ.**

Ծրագիրը հաջողված է, որի վկայությունն են մոնիթորինգի դրական արդյունքը և ուսանողների արտահայտած գոհունակությունը: Այն առավել ներգործուն դարձնելու համար նպատակ է դրվել ավելացնել իսպաներենով դասավանդվող առարկաների քանակը՝ գործնական գիտելիքի ստացման հնարավորությունների շեշտադրմամբ: Ծրագրի ակնհայտ առավելություններից են դասավանդման որակը, միջազգային քննության անցկացման հնարավորությունները, ինչպես նաև հրավիրյալ դասախոսների ներգրավումը ծրագրում: Անհրաժեշտություն կա կազմակերպել արտադրական պրակտիկան ԵՊՀ-ից դուրս, ինչի հետ կապված մշակվում են համապատասխան քայլեր:

Ընդհանուր եզրակացություն Միջմշակութային հաղորդակցություն
/ԱՆԳԵԼԵՆԵՆ/ կրթական ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ.

Ծրագիրն արդիական է և հաջողված, որի առավելություններից է միջազգային համագործակցությունը: Հաշվի առնելով նաև ուսանողների առաջարկությունները՝ մշակված է հստակ գործողությունների հաջորդականություն՝ գործնական գիտելիքի ծավալն ընդլայնելու և առարկայական ծրագրերը թարմացնելու ուղղությամբ: Ծրագրվում է նաև արտադրական պրակտիկան կազմակերպելու, ինչպես նաև գիտելիքների ստուգման ավելի ներգործուն ձևերի մշակում:

Ընդհանուր եզրակացություն Միջազգային գործարար հաղորդակցման
լեզվամշակույթ կրթական ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ

Այս ծրագիրը հաջողված է առարկաների ընդգրկվածությամբ, դասավանդման որակով և յուրացված գիտելիքը կիրառելու համար ստեղծված համապատասխան հնարավորություններով: Ակնհայտ առավելություններից է ակտիվ համագործակցությունը միջազգային մի շարք կազմակերպությունների

հետ: Ծրագրվում է ջանքեր գործադրել արտադրական պրակտիկայի՝ ԵՊՀ-ից դուրս ավելի արդյունավետ կազմակերպման ուղղությամբ: Այնուամենայնիվ, որոշ ընդհանրական, բայց պարտադիր համարվող առարկաների վերանայման և գիտահետազոտական աշխատանքի նոր ձևերի մշակման կարիք կա:

Ընդհանուր եզրակացության Միջմշակութային հաղորդակցություն /ԳԵՐՄԱՆԵՐԵՆ/

Ծրագիրը հաջողված է, որի վկայությունն է նաև ուսանողների գոհունակությունը, այնուամենայնիվ, բանավոր հարցումներից պարզ է դարձել, որ գիտելիքի գնահատման մեթոդների վերանայման կարիք կա: Կարևոր է նաև պայմաններ ստեղծել տեսական գիտելիքները գործնականում կիրառելու համար: Այս առումով, անհրաժեշտ է գտնել նոր ձևեր՝ արտադրական պրակտիկան արդյունավետ իրականացնելու համար: Առկա է որոշ դասընթացների վերանայման, ինչպես նաև որոշ դեպքերում ուսումնական նյութը բարելավելու կարիք: Ծրագրվում է առավել ընդլայնել միջազգային համագործակցությունը, ինչպես նաև ստեղծել համապատասխան գործատուների հետ փոխադարձ կապի հնարավորություններ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հավանություն տալ հաշվետվությանը: Քվեարկությունը՝ միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ Գ.Բարսեղյանը ներկայացրեց, որ ս/թ մարտի 4-6 «Yerevan EXPO» ցուցահանդեսային համալիրում տեղի է ունենալու «Կրթություն և կարիերա Էքսպո 2020» 20-րդ հոբելյանական միջազգային ցուցահանդեսը: Ցուցահանդեսի նպատակն է դպրոցականներին և ուսանողներին տեղեկություն տրամադրել ժամանակակից կրթության վերաբերյալ, ինչպես նաև տեղեկացնել աշխատաշուկայում առավել պահանջարկ ունեցող մասնագիտությունների մասին: Առաջարկ եղավ՝ ԵԼՀ ֆակուլտետի ամբիոնները ներկայանան պրեզենտացիայով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ամբիոնների միասնական աշխատանքի արդյունքում ստեղծել մեկ վիդեո հոլովակ, որը համապարփակ տեղեկատվություն կտրամադրի ինչպես ԵԼՀ ամբիոնների աշխատանքների, այնպես էլ ուսանողների, շրջանավարտների հաջողությունների մասին: Քվեարկությունը՝ միաձայն:

ԼՄԵՑԻՆ՝ ԵՊՀ «Անգլերեն Լեզու և Գրականություն» մագիստրոսական կրթական ծրագրում դասավանդող դասախոսական կազմին ներկայացվող պահանջները:

Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Դ., պրոֆ. Ս.Գասպարյանը նշեց, որ պահանջների մեջ կարևորվում են որոշակի ընդհանրական **մանկավարժական** կարողություններ /առարկայական ծրագիր և օրացույցային պլան կազմելու հմտություն, էթիկայի կանոնների պահպանում, ուսանողի մասնագիտական կարողությունների ձևավորման հարցում աջակցություն/:**Հետազոտական** կարողությունների մասով նա առանձնացրեց տարաբնույթ գիտական աղբյուրների հետ աշխատելու, ինչպես նաև համացանցային տեղեկատվական ռեսուրսներից օգտվելու հմտություն, գիտական աշխատանքի ղեկավարում, հոդվածների, դասագրքի, մենագրության հրատարակում, գիտաժողովների մասնակցություն, նոր ծրագրերի մշակում: **Հաղորդակցման** հմտությունների մեջ նա առանձնացրեց լսարանի հետ արդյունավետ հաղորդակցում իրականացնելու կարողություն, համագործակցային կարողությունների դրսևորում: **Մասնագիտական** կարողությունների մասով նա կարևորեց անգլիական բանասիրության բնագավառի ուսումնասիրության գիտահետազոտական մեթոդների իմացություն և մասնագիտական փաստեր վերլուծելու կարողություն: **Գիտահետազոտական** գործունեության արդյունքների ինտեգրում ուսումնական գործընթացի մեջ, անգլերենի իմացության առնվազն C1 մակարդակ, գիտական աստիճան և կոչում, 7-10 տարվա մանկավարժական

փորձ, դասավանդվող նյութերի առնվազն 50% առցանց նյութերի առկայություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ Ջ.Հարությունյանը: Նա նշեց, որ նշված պահանջները գուցե պատճառաբանված ու արդարացի են, բայց, միևնույն ժամանակ, հավելեց, որ դասախոսի առջև չափից դուրս շատ սոցիալական խնդիրներ են ծառայել, որոնց հետ նա ստիպված է համակերպվել: Նա կարևորեց նաև, որ դասախոսը կարող է հիանալի տեսաբան լինել, բայց գործնական լեզու դասավանդելու մեջ թերանալ և, ընդհակառակը, ունենալ մեծ հմտություն գործնական լեզվի դասավանդման գործընթացում, բայց տեսական առարկաների դասավանդման մեջ որոշակի բացթողումներ ունենալ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հավանություն տալ հաշվետվությանը: Քվեարկությունը՝ միաձայն:

Գիտխորհրդի նախագահ և ղեկան,բ.գ.թ.,դոց.՝

Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար բ.գ.թ.,դոց.՝

Մ.Դալայան

31 .01. 2020 թ.

